ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/40724-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-931-01.10.2024-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

«Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Նախագծի 1-ին հոդվածում «2010» թվից առաջ շարադրված «Հայաստանի Հանրապետության» բառերն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը:

2. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ կառավարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական

ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով, 21-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 34-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Լիցենզավորման մասին» օրենքի 12.1-ին հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասում նշված բոլոր «ՀՀ կառավարության» բառերին:

3. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասում առաջարկում ենք «նախքան փոփոխող իրավական ակտի ուժի մեջ մտնելը» բառերը փոխարինել «փոփոխող իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից» բառերով՝ հաշվի առնելով, որ եթե Կոմիտեի կողմից վարվող ցանկում փոփոխություն կատարվի նախքան համապատասխան փոփոխություն նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը, ապա այդ ցանկը հակասելու է Հայաստանի Հանրապետության՝ տվյալ պահին գործող իրավական ակտերին այնքան ժամանակ, քանի դեռ փոփոխություն նախատեսող իրավական ակտն ուժի մեջ չի մտել:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Լիցենզավորման մասին» օրենքի 12.1-ին հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասում նշված «նախքան փոփոխող իրավական ակտի ուժի մեջ մտնելը» բառերին:

4. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասում «ապրանքները հանումը» բառերն առաջարկում ենք փոխարինել «ապրանքների հանումը» բառերով:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Լիցենզավորման մասին» օրենքի 12.1-ին հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասում նշված «ապրանքները հանումը» բառերին:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ